

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԱԵՂԲՈՐ ԳՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՉԻ ԱՌԻԹՈՎ

ՔՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Գիտական որևէ հարց կարող է քննության առարկա դառնալ միաժամանակ տարբեր ուսումնասիրողների համար միևնույն կամ տարբեր ժամանակահատվածներում, իրարից անկախ կամ որոշակիորեն տարբեր միտումներով. և այդ քննությունները (տարբեր մոտեցումներով, մեթոդներով, հարցերի առաջադրումներով և այլն) միայն կնպաստեն տվյալ խնդրի համակողմանի ներկայացմանն ու ամբողջական պատկերի բացահայտմանը: Ուստի, նույն հարցի վերաբերյալ տարբեր ուսումնասիրողների աշխատանքները միայն ողջունելի են, օգտակար և հաճախ փոխլրացնող: Նույնքան օգտակար չեն, սակայն, առանց հարցի ուսումնասիրության պատմությանը լիարժեք ծանոթանալու գրված, ինչպես նաև առկա աշխատանքներն անտեսող ուսումնասիրությունները՝ հատկապես այն դեպքում, երբ նոր գրված գործի հեղինակն անդրադառնում կամ գնահատական է տալիս նաև հարցի ուսումնասիրության պատմությանը:

Հասմիկ Բադալյանը նորերս տպագրել է «Հովհաննես Արքաեղբոր գրչական գործունեությունը» խորագրով մի հոդված¹, որ մեզ հատկապես հետաքրքիր էր, քանի որ խնդիրը ծանոթ էր. դեռևս 2016 թ. տպագրվել է մեր «Հեթում Բ. արքայի մի անյայտ Յայսմաուրքի նորայայտ մասունքը (ՄՄ № 4744 ձեռագրի պատառիկ-պահպանակը)» հոդվածը², որի առիթով անդրադարձել ենք նաև Հովհաննես Արքաեղբոր ձեռագրական ժառանգությանը՝ կազմելով նրա ընդօրինակած և պատվիրած-ստացած ձեռագրերի «ներկայիս հնարավորությունների համեմատ... առաւել ամբողջական ցանկը»³ (թեև այն մեր հոդվածի բուն խնդիրը չէր): Եվ այժմ հետաքրքիր էր, թե ինչպես է հեղինակը ներկայացրել Հովհաննես Արքաեղբոր գործունեությունը, ինչ նոր փաստեր էին ի հայտ եկել, և ինչ ճշտումներ էին կատարվել այս ընթացքում: Հոդվածը կարդալուց հետո ընթերցողական մեր պարզ հետաքրքրությունը

¹ Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2019, № 3 (30), էջ 16-25՝ http://ysu.am/files/02H_Badalyan.pdf (15.06.2020):

² Տե՛ս «Էջմիածին» հանդես, 2016, № Թ., էջ 96-115՝ <http://echmiadzin.asj-oa.am/15806/1/96.pdf> (15.06.2020)

³ Ք. Հարությունյան, նշվ. հոդվ., էջ 101:

հանգեցրեց ներկա քննությանը, որն էլ այստեղ ներկայացնում ենք՝ նպատակ ունենալով ևս մեկ անգամ ցույց տալ գիտական ցանկացած աշխատանքում աղբյուրներին ու եղած գրականությանը քաջածանոթ լինելու և/կամ գիտական բարեխղճության (ուրիշների վաստակը չուրանալու) կարևորությունը:

Հեղինակը, իր հոդվածի⁴ սկզբում ընթերցողին ծանոթացնելով Հովհաննես Արքաեղբոր հետ՝ կենսագրական տեղեկություններ, աղբյուրներ և այլն, հիշում է նաև իրենից առաջ նրա մասին գրված աշխատությունների մասին. «Հարկ է նշել, որ հայ միջնադարագիտության մեջ Հովհաննես Արքաեղբոր կյանքին և գործունեությանը նվիրված տարբեր գիտական աշխատանքներ են գրվել»⁵: Ասածը հաստատել է 13-րդ ծանոթագրության մեջ թվարկելով հետևյալ աշխատությունները՝ Ղ. Ալիշան, «Միսունան» և «Հայապատում», Գ. Զարբհանայան, «Հայկական հին դպրութիւն», Ն. Ծովական, «Գոներ», Հր. Աճառյան, «Անձնանունների բառարան», Ս. Ճևահիրճյան, «Գոների վանքը»: Ապա նշում է նաև հայ միջնադարյան մանրանկարչությանը վերաբերող ուսումնասիրություններում եղած անդրադարձների մասին (Ս. Տեր-Ներսեսյան, Լ. Ազարյան):

«Մակայն Հովհաննես րաբունու ծավալած գրչական գործունեությունը մինչ օրս ներկայացված և գնահատված չէ ամբողջությամբ: Ներկա աշխատանքը մի փորձ է ձեռագիր սկզբնաղբյուրների հետազոտության հիման վրա համակողմանի ուսումնասիրել Հովհաննես Արքաեղբոր մշակութային գործունեության այս ոլորտը» (Հոդված, էջ 18):

Այստեղ «անգիտացված» է այն փաստը, որ վերը նշված մեր հոդվածում արդեն կազմել էինք Հովհաննես Արքաեղբոր ընթերցանական և պատվիրած, մինչ օրս հայտնի բոլոր ձեռագրերի ցանկը, իսկ մեզնից առաջ իրենց հայտնի ձեռագրերի ցանկեր կազմել էին Ն. Պողարյանն ու Ղ. Ալիշանը: Հետևաբար, մեղմ ասած, առնվազն ճիշտ չենք համարում «գրչական գործունեությունը մինչ օրս ներկայացված... չէ ամբողջությամբ» արտահայտությունը՝ մի կողմ թողնելով գնահատումը: Իհարկե, կարելի է հակադարձել, որ ընթերցանական ու ստացած ձեռագրացանկերի կազմումը դեռևս գրչական գործունեությունը ներկայացնելը չէ: Անշուշտ, այն ենթադրում է ավելի մանրակրկիտ ու խորը ուսումնասիրություն, այլ գործոնների (ինչպես, ժամանակի աշխարհաքաղաքական հարցերից մինչև կրթամշակութային կյանքի պայմաններ, գործունեության համար նպաստավոր նախադրյալներ և այլն) ընդգրկմամբ ու համադրմամբ կազմված իրականության ներկայացում, բայց մյուս կողմից էլ ձեռագրերի ամբողջական ցանկը կազմելը նման աշխատանքի

⁴ Քանի որ հաճախ ենք մեջբերումներ անելու Հ. Բաղայանի «Հովհաննես Արքաեղբոր գրչական գործունեությունը» հոդվածից, ուստի այսուհետև մեր շարադրանքում կամ տողատակին այն հիշատակելու ենք «Հոդված» ձևով:

⁵ Հոդված, էջ 17:

նախապայմանն ու հիմքն է. ավելին՝ եթե անհրաժեշտ լինի համառոտ կերպով ներկայացնել գրչական գործունեությունը, ապա ի վերջո դա հիմնավելու է հենց նույն այդ ցանկերի վրա:

Ահա մեր հոդվածի՝ հարցի ուսումնասիրությանը վերաբերող հատվածը՝ շարադրանքը չծանրաբեռնելու համար առանց տողատակի ծանոթագրությունների ու մեջբերումների.

«Յիշատակարանների եւ պատմագրութեան տուեալների համադրմամբ նրա (Հովհաննէս Արքաեղբոր՝ Ք. Հ.) մասին լիարժէք տեղեկութիւններ է հաղորդում Ղեւոնդ Ալիշանը՝ «Միսուն» գրքում ներկայացնելով նաեւ Յովհաննէսի գրած կամ ստացած՝ իրեն յայտնի բոլոր ձեռագրերը, իսկ «Հայապատում»ի մէջ հրատարակելով այդ ձեռագրերի յիշատակարանները: Ապա այս կամ այն առիթով նրան անդրադարձել են Ն. Ալիսեանը, Գ. Զարբհանալեանը, Մ. Օրմանեանը, Ն. Պողարեանը, Հր. Աճառեանը, Լ. Տեր-Պետրոսեանը, Կ. Մութաֆեանը եւ ուրիշներ. գրեթէ բոլորը հիմնականում հետեւում կամ ուղղակիորէն մէջբերում են Ղ. Ալիշանին: Կիլիկեան արուեստի, մանրանկարչութեան պատմութեան ուսումնասիրողները եւս, ըստ իրենց ուսումնասիրութեան խնդրի, անդրադարձել են նրա գործունեութեանը, մասնաւորապէս՝ Մ. Տեր-Ներսիսեանը, Լ. Ազարեանը... ներկայիս հնարաւորութիւնների համեմատ կարողացանք կազմել Յովհաննէս Արքաեղբոր գրած եւ ստացած ձեռագրերի առաւել ամբողջական ցանկը (նախորդների, ասենք՝ Ալիշանի կամ Ն. եպս. Պողարեանի կազմած ցանկերը թերի են կամ այն պատճառով, որ դա նրանց ուսումնասիրութեան գլխաւոր խնդիրը չի եղել, կամ էլ որոշ ձեռագրեր դեռեւս յայտնի չեն եղել)»⁶:

Ստացվում է, որ արդեն 2016 թ. կատարվել է աշխատանքի մի մասը, որը Հոդվածում ներկայացված է իբրև նորություն: Բայց առավել կարևորը մեր հոդվածի «անտեսվածությունը» չէ, այլ այն անփութություններն ու անճշտությունները, որոնց ցուցադրումը ներկա շարադրանքի հիմնական նպատակն է: Ուստի Հոդվածի իրական նորությունը, ձեռագրերի ներկայացվածությունն ու մեր ցուցակների հետ ունեցած տարբերությունը հասկանալու համար կազմեցինք Հոդվածում ներկայացված ձեռագրերի ցանկը, ապա համեմատեցինք մեր ունեցածի հետ համապատասխան նշումներ անելով: Նկատենք, որ հեղինակը ներկայացրել է Հովհաննէս Արքաեղբոր ձեռագրական գործունեությունը խոսելով նրա սրբագրած և ուղղած, ապա ընդօրինակած, պատվիրած, ինչպէս նաև աշակերտների հետ համատեղ գրած մատյանների մասին: Ձեռագրերը բերում ենք սուկ թվարկելով՝ հոդվածում եղած ձևով ու հերթականությամբ (որքանով հնարավոր է), և միայն որոշ դեպքերում ըստ հարկի մեջբերումներով ու մեր դիտարկումներով:

1. ՄՄ 1315:

2. ՄՄ 5525:

⁶ Ք. Հարությունյան, նշվ. հոդվ., էջ 100-101:

ՀՈՂՎԱԾ, էջ 18-19. «Մաշտոցյան մատենադարանի (այսուհետև՝ Մատենադարան) 5525 գրչագիրը, որ Հովհաննեսը արտագրել է ծեր հասակում, ուղղել, հղկել է 2 ձեռագրերի համեմատությամբ. «Բ արինակս եղի առ իրեարս... գրադարձից ծանաւթից» (ՄՄ 5525, 226ա)»:

Սակայն իբրև ՄՄ 5525-ի հիշատակարանից մեջբերում ներկայացված է հատված Ձմմառի № 120 ձեռագրի («Դանիել վարդապետի Ասորոյ Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի») 229բ հիշատակարանից⁷: Սա վրիպակ կարելի էր համարել, եթե օրինակից հետո փակագծում դարձյալ գրված չլինէր «ՄՄ 5525, 226ա»: Շարունակությունը ավելի է խճճում դրությունը:

ՀՈՂՎԱԾ, էջ 19. «Գլխավոր հիշատակարանը հուշում է նաև, որ Հովհաննեսը ձեռագիրը սրբագրել է համեմատելով անգամ 3 ձեռագիր...»:

Այստեղ կրկին մեջբերում կա հիշատակարանից՝ այս անգամ արդեն Մ. Քեշիշյանի «Ցուցակ հայերեն ձեռագրաց Ձմմառի վանքի մատենադարանին» ձեռագրացուցակին հղումով, ընդ որում՝ տալիս է «էջ 242» (ՀՈՂՎԱԾ, ծնթ. 20), այնինչ պետք է լինէր «էջ 243»: Ստացվում է հակասություն. խոսելով Երևանի Մատենադարանի ձեռագրի մասին՝ հեղինակը նույն ձեռագրից բերված երկրորդ քաղվածքի համար հղել է Մ. Քեշիշյանի Ձմմառի վանքի ձեռագրացուցակը: Իրական ՄՄ 5525 ձեռագրից հիշատակարանային մեջբերումներ կան 19-րդ և 20-րդ էջերում: Վերջինում էլ գրչության թվականը, առանց որևէ բացատրության, համարված է 1286-ը, մինչդեռ Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակում այն 1284-1286 է⁸:

3. ՄՄ 7534 և 195:

ՀՈՂՎԱԾ, էջ 19. «Մատենադարանի 7534 և 195 ձեռագրերում անդրադարձել է իր կատարած աշխատանքին. «...յոյժ աշխատեցա յուղոյն սորա գիւտ»:

Քանի որ մեջբերումը հղում կամ ծանոթագրություն չունի, ուստի անհասկանալի է, թե նշվածներից ո՞ր ձեռագրին է այն, և արդյո՞ք այս 2 ձեռագիրն էլ սրբագրել է Արքաեղբայրը: Ամեն դեպքում, կարողացանք պարզել, որ մեջբերումը ՄՄ 195 ձեռագրի 406ա հիշատակարանից է⁹, իսկ 7534-ի հիշատակումը մնում է հեղինակի բացատրությանը կարոտ:

4. ՄՄ 345:

5. ՄՄ 10773:

⁷ Տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց Ձմմառի վանքի մատենադարանին, կազմեց՝ Մ. Վրդ. Քեշիշյան», Վիեննա, 1964, էջ 242, հմմտ. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար, կազմեց Ա. Մաթևոսյան», Եր., 1984, էջ 641 (այսուհետև՝ ԺԳ. դ. հիշ-ք):

⁸ Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», կազմեցին Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, հ. Բ., Եր., 1970, էջ 126 (այսուհետև՝ ՄՄ Համառոտ ցուցակ):

⁹ Տե՛ս «Մայր Ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, կազմեցին Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան», հ. Ա., Եր., 1984, էջ 841, հմմտ. ԺԳ. դ. հիշ-ք, էջ 564:

6. ՄՄ 10480:

7. Վնտկ. № 21 Աստվածաշունչ:

Իրականում սա Վնտկ. 376 ձեռագիրն է, որը ձեռագրացուցակում ներկայացված է 21-րդ համարի ներքո: Համարների՝ առաջին հայացքից աննշան թվացող այս շփոթը ձեռագրերի հետ աշխատող գիտնականի համար անթույլատրելի է և կարող է իր հերթին պատճառ դառնալ թյուրըմբռումների ու շղթայական սխալների:

8. 1278 թ.-ի Ավետարան:

ՀՈՂՎԱԾ, էջ 20. «1278 թ. Հովհաննեսը մագաղաթյա Ավետարան է արտագրել... (ՄՄ 264բ)»:

Գ. Գալեմբյարյանի «Ցուցակ հայերեն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Միւնխէն»-ին արված հղումից ընթերցողը պետք է հասկանա, որ ձեռագիրը ոչ թե ՄՄ է, այլ Սյունիսենի № 1:

9. 1271 թ.-ի Ավետարան:

ՀՈՂՎԱԾ, էջ 20. «Վերջինս (իմա՝ Առաքել Հնազանդէնցը) կազմել է նաև 1271 թ. Վասիլ գրչի արտագրած Ավետարանը, որի պատվիրատուն Հովհաննէսն է»:

Իբրև աղբյուր հղված է ԺԳ. դարի հիշատակարանների ժողովածուն: Ըստ նույն ժողովածուի՝ Հովհաննեսը հետագայի ստացող է (ձեռագիրը՝ Քյուրտյան հավաքածուի № 111, գրիչը՝ Բասիլ, ստացողը՝ Աստուծատուր քին.), հետևաբար չէր կարող պատվիրատու լինել:

10. Վնտկ. 1529. դարձյալ շփոթված է ձեռագրացուցակի համարը ձեռագրի գույքահամարի հետ, որն է՝ 1515:

11. Վնտկ. 1066. նախորդի պես, իրական համարը 796 է:

12. Եղմ. 2568:

13. 1289 թ. գրված «Մեկնութիւն Սաղմոսաց Դանիէլ վարդապետի Ասորոյ»՝ հղված Զմմառի Ձեռագրացուցակին (սա Զմմառի № 120 ձեռագիրն է):

14. ՄՄ 197:

15. ՄՄ 196:

16. ՄՄ 3710:

17. Եղմ. 458:

Այս ձեռագիրը Հողվածում հիշվում է 2 անգամ. սկզբում այն նշվում է որպես «առաջին ձեռագիրը, որում հիշատակվում է նրա (Հովհաննէսի՝ Ք. Հ.) անունը» (ՀՈՂՎԱԾ, էջ 16): Սակայն Երուսաղեմի ձեռագրացուցակում, որին հղում է Հողվածը, Ն. Պողարյանը ձեռագիրը թվագրել է ԺԳ. դարով: Խնդրի բացատրությունը հեղինակը տալիս է ոչ թե անմիջապես, այլ 22-րդ էջի 31-րդ ծանոթությամբ:

Երկրորդ անգամ ձեռագիրը հիշատակված է «Տեսութիւն պատմութեան բանից ննջման սրբոց աւետարանչին Յովհաննոս»՝ առանց ձեռագրի համարի: Ձեռագիրը բերված է իբրև Արքաեղբոր պատվերով ընդօրինակություն, այնինչ կարելի էր նաև նշել, որ ձեռագրի մի մասը

գրել է Արքաեղբայրը՝ ըստ իր իսկ հիշատակարանի. «Ես Յոհաննէս Ե-պիսկոպոս, դատապարտ ծառայ Աստուծոյ... գոր իմ իսկ մեղսակարթ ձեռամբ եւ հողացեալ մատամբ սկսա, եւ վասն անպարապուրթեան իմոյ էտու գրել Փիլիպպոսի քահանայի...»¹⁰:

18. 1263 թ. Ավետարան՝ հղած Ա. Սանջյանի կազմած ցուցակին (ծնթ. 32):

Ա. Սանջյանի կազմած այս ցուցակը պարունակում է Ամերիկայի Միացյալ Նահանգների տարբեր քաղաքների (Բերկլի, Լոս Անջելես, Սան Սարինո, Չիկագո, Բալթիմոր, Նյու Յորք, Վաշինգտոն և այլն) համալսարաններում, գրադարաններում, թանգարաններում և այլ հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերի նկարագրություններ, հետևաբար ճիշտ կլինե՞ր նշել նաև ձեռագրի գտնվելու ստույգ վայրն ու համարը, ինչպես որ դրանք բերված են ձեռագրացուցակում: Այս դեպքում ձեռագիրը Ֆրիբ արվեստի թանգարանի (FGA) 56.11-ն է:

19. Վիեն. 245 Ճաշոց:

20. ՄՄ 4243 Աստվածաշունչ:

ՀՈՂՎԱՄԾ, էջ 23. «...1266 թ. օրինակված Մատենադարանի 4243 Աստվածաշունչը», «Ձեռագրում հիշատակվում է գրչության երկու թվական՝ 1263 և 1266 (ՄՄ 4243, 129ա, 123ա)»:

ՄՄ Համառոտ ձեռագրացուցակում իբրև գրչության թվական տրված է 1263-1266 թթ.: Ձեռագրագիտական ներկայիս սկզբունքի համաձայն, եթե ձեռագիրն ունի և՛ սկսման, և՛ ավարտի (կամ գոնե ընթացքի մեջ լինելու) ժամանակի մասին հիշատակումներ, ապա թվագրվում է Ա-Բ ձևով: Իսկ քանի որ այստեղ հստակ նշում ունենք՝ «Ի թուին հայոց ՉԺԲ. (1263) գրեցաւ աստուածային մատեանս ձեռամբ Ստեփանոսի գրչի... 129ա» (ԺԳ. դ. հիշ-ք, էջ 341) և «Ի թիս Հայոց ՉԺԵ. (1266) գրեցաւ սա... 123ա» (ԺԳ. դ., հիշ-ք, էջ 343), ապա ներկայացման ընդունելի ձևը մնում է 1263-1266 թթ.:

21. ՄՄ 4515:

ՀՈՂՎԱՄԾ, էջ 23. «Մատենադարանի 4515 ձեռագիրը՝ Գևորգ Սկևռացու «Լուծմունք գրոցն Եւագրի Պոնտացոյ» գործը, Հովհաննէս աշակերտը»:

Իրականում ՄՄ 4515 ձեռագիրը Ղևոնդ Փիրղալեմյանի «Նշխարք Պատմության հայոց» ժողովածուն է գրված 1884 թ., Վանում¹¹: 1278 թ. գրված «Լուծմունք»-ը մեզ չի հասել, և միայն դրա մասին տեղեկությունն է պահպանվել Ղ. վ. Փիրղալեմյանի ժողովածուի շնորհիվ, որն էլ սխալմունքով հեղինակը համարել է բուն ձեռագիր՝ գրված 1278 թ. (թեև ՄՄ Համառոտ ցուցակը հստակ տալիս է այս ձեռագրի գրչության թվա-

¹⁰ «Մայր Յուզակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան», հ. Բ., Երուսաղեմ, 1967, էջ 380: Քաղվածքի «սրբոց» բառը ձեռագրացուցակում ունի եզակի «սրբո» ձևը:

¹¹ Տե՛ս ՄՄ Համառոտ ցուցակ, հ. Ա., Եր., 1965, էջ 1228:

կանը, վայրը և հեղինակին)¹²: Հոդվածն այս ձեռագրի հիշատակությա-
նը վերաբերող հղում չունի, սակայն ակնհայտ է, որ բավականացել է
ԺԳ. դարի հիշատակարանների հատորը (էջ 485-486) նայելով, միաժա-
մանակ չնկատելով, որ այնտեղ նշված է հիշատակարանի ճշգրիտ
հասցեն՝ «Երևան 4515, Փիրղալեմյան, Նշխարք, Ա, էջ 44-46» (էջ 485):

22. 1259-1278 թթ. Ճաշոց և «Գործք Առաքելոց՝ հղած Բանբեր Մա-
տենադարանի», հտ. 11, էջ 415-416:

Հեղինակը ոչ մի ուղղակի տեղեկություն չի տալիս այս ձեռագրի
պահպանման վայրի, հավաքածուի և համարի մասին: Ընթերցողն ին-
քը, հղումով գնալով, պետք է պարզի, որ «Բանբեր Մատենադարանի»
11-րդ հատորում Հարություն Քյուրտյանի՝ «Համառոտ Ցուցակ հայերեն
գրչագիրներու Քյուրտյան հավաքածոյի ի Ուիչիդա. Կանգաս. ԱՄՆ»
խորագրով հրատարակած ձեռագրերի նկարագրությունն է, իսկ վերը
նշված ձեռագիրը 38-րդը (այժմ՝ Վենետիկ, Մխիթարյան մատենադա-
րան, Քյուրտյան հավաքածու):

23. Նոր Ջուղայի 397 ձեռագիր:

Կրկին՝ ձեռագրի իրական համարը 88 է, իսկ 397-ը ձեռագրացու-
ցակի համարն է:

ՀՈՂՎԱԾ, էջ 24. «Իսկ Նոր Ջուղայի 397 ձեռագրի՝ «Եպիփան Կիպ-
րացոյ Կ. Պոլսոյ եպիսկոպոսի» գրքի գրչության վերջին թվական կա-
րելի է համարել 1289 թ.՝ Հովհաննես Արքաեղբոր մահվան տարին»:

Բացի հղումից՝ Հոդվածում այս ձեռագրի մասին այլ տեղեկություն
չկա, ուստի անհասկանալի է մնում, թե ինչո՞վ է պայմանավորված
գրչության վերջին թվականը՝ 1289-ը, Արքաեղբոր մահվան տարին հա-
մարելը: Գուցե հեղինակը նկատի ունի, որ այն 1289 թ.-ից հետո այլևս
չէր կարող գրվել, բայց դա ինքնին հասկանալի է:

24. ՄՄ 4947:

ՀՈՂՎԱԾ, էջ 24. «Հովհաննեսի հանձնարարությամբ Ներսիսուկ
գրիչը 1289 թ. ավարտել է «Տրամախօսութիւն» աշխատությունը (ՄՄ
4947)»:

ՄՄ Համառոտ ցուցակում գրչության ժամանակը համարված է
ԺԳ. դար: Ա. Մաթևոսյանի կազմած ժողովածուում այս ձեռագրի հիշա-
տակարանները 1289 թ. ներքո են թերևս այն պատճառով, որ Արքաեղ-
բոր բոլոր չթվագրված ձեռագրերն Ա. Մաթևոսյանը (եթե ճշտող որևէ
այլ հանգամանք չի ունեցել) դրել է հնարավոր վերջին թվականի, այն է՝
1289 թ. շարքում: Այսպես է վարվել և ծանոթագրությամբ բացատրել
Վիեննայի Ճաշոցի դեպքում (ԺԳ. դ. հիշ-ք, էջ 642), իսկ ժողովածուում
հաջորդիվ եկող ՄՄ 1315, ՄՄ 3710, ՄՄ 4947, Քյուրտյան Հաւաքածուի
Ճաշոցի, Եղմ 2568 ձեռագրերի դեպքում, կարծում ենք, առաջնորդվել է
նույն սկզբունքով՝ առանց ամեն անգամ ծանոթագրելու:

¹² Այս մասին տե՛ս նաև **Ք. Հարությունյան**, նշվ. հոդվ., էջ 102, ծնթ. 21:

Ուստի 1289-ն այս ձեռագրի գրչության թվականը չէ, քանի դեռ ապացուցված չէ փաստերով:

Այսպիսով, իրոք ստացվում է 25 ձեռագիր, ինչպես նշված է Հոդվածի սկզբում (մենք 3-րդ կետում միասին ենք նշել 7534 և 195 ձեռագրերը):

Մեր հոդվածում ներկայացրել էինք 22 ձեռագիր՝ առանց

ա. Արքաեղբոր սրբագրած ձեռագրի՝ Երուսաղեմի 2568, քանի որ մեր նպատակը միայն գրած և պատվիրած ձեռագրերի ներկայացումն է եղել:

բ. Քյուրտյան հավաք. № 111-ի, քանի որ Հովհաննեսը հետագայի ստացող է:

գ. ՄՄ 7534, քանի որ անհասկանալի է ձեռագրիս կապը Արքաեղբոր հետ:

Արդ, որքան էլ հեղինակը ձեռագրացուցակներից մեծ աշխատանքով հավաքել է Հովհաննես Արքաեղբորն առնչվող ձեռագրերին՝ վերաբերող տեղեկությունները, այնուամենայնիվ այդ աշխատանքն արդեն արված էր, և միանգամայն սխալ է, անգամ՝ ազնիվ չէ հայտարարելը, թե «Հովհաննես րաբունու ծավալած գրչական գործունեությունը մինչ օրս ներկայացված... չէ ամբողջությամբ»: Ի հավելումն սրա, եթե ամփոփ ընդհանրացնենք Հոդվածի վերաբերյալ մեր դիտարկումները, ապա կարելի է ասել.

ա. Ձեռագրերի համարները և հավաքածուները որոշ դեպքերում ներկայացված են անփոյթ և ոչ պատշաճ (օրինակ՝ ձեռագրի գույքահամարի փոխարեն ձեռագրացուցակում զբաղեցրած համարը՝ Վնտկ. 376-ի փոխարեն՝ 21, Վնտկ. 1515-ի տեղ՝ 1529, Վնտկ. 796-ի տեղ՝ 1066, Նոր Ջուղայի 88-ի տեղ՝ 397), իսկ որոշ դեպքերում ուղղակի բացակայում են (օրինակ՝ 1289 թ. գրված «Մեկնութիւն Սաղմոսաց Դանիէլ վարդապետի Ասորոյ», 1263 թ. Ավետարան, 1259-1278 թթ. Ճաշոց և «Գործք Առաքելոց»)¹³, ինչը հակասում է գիտական փաստերի սպառիչ ու ճշգրիտ ներկայացման սկզբունքին և կարող է հանգեցնել հետագա սխալների ու շփոթների: Ձեռագրի համարի կարևորությունը գուցե սովորական ընթերցողը չհասկանա, սակայն այս բնագավառում աշխատող ցանկացած ուսումնասիրողի համար պետք է որ պարզ լինի դրանց թերի կամ անճիշտ ներկայացման անհարմարությունը (եթե ոչ անթույլատրելիությունը):

բ. Որոշ դեպքերում անտեսված, արձանագրված չեն ձեռագրերի մասին ձեռագրացուցակներում եղած փաստերը, կամ գոնե չկան համապատասխան բացատրություններ Հոդվածում եղած տարբերությ-

¹³ Նկատի չունենք տողատակի հղումները, որոնցում ամեն դեպքում տրվում է միայն ձեռագրացուցակը՝ առանց հավաքածուի և ձեռագրի համարի, և որոնցից օգտվելն ընթերցողի համար առավել ժամանակատար ու աշխատատար է, քան շարադրանքում ձեռագրի հավաքածուի և համարի ներկայացումը:

յունների մասին այն դեպքում, երբ ձեռագրացուցակներն այսօր ձեռագրերի մասին տեղեկությունների առաջին հավաստի և ընդունելի աղբյուրներն են (անշուշտ, ոչ անհերքելի կամ անճշտելի). օրինակ՝ ՄՄ 4243-ի, ՄՄ 4947-ի գրչության թվականների հարցը: Անտեսված կարելի է համարել նաև Ա. Մաթևոսյանի կազմած «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար» ժողովածուն, թեև այն օգտագործված և 3 անգամ էլ հղված է: Քանի որ այս ժողովածուում կան Հոդվածում բերված գրեթե բոլոր հիշատակարանները, ապա կարելի էր, եթե անգամ հեղինակը օգտվել է բուն ձեռագրերից, ամեն անգամ հղել նաև այն, որպեսզի ընթերցողին ևս հասու լինի հիշատակարանը: Դրանով կավելանար Հոդվածի և՛ տեղեկատվական արժեքը, և՛ հավաստիությունը, և՛ օգտակարությունը:

գ. Որոշ պնդումներ ապացուցված չեն, լոկ ենթադրություններ են՝ իբրև իրողություն ներկայացված (օրինակ՝ ՀՈՂՎԱԾ էջ 20-ի այն միտքը, որ Վասիլ գրչի 1271 թ. Ավետարանի պատվիրատուն Արքաեղբայրն է, կամ էջ 19-ում ՄՄ 7534-ին անդրադարձը):

դ. Առկա են որոշ սխալներ (օրինակ՝ ՄՄ 4515-ի, ՄՄ 5525-ի վերաբերմամբ):

ե. Եթե անդրադառնանք Հովհաննես Արքաեղբոր գործունեության գնահատման խնդրին, ապա որքան էլ հեղինակը ներկայացրել է նրա ընդօրինակած, պատվիրած, սրբագրած ձեռագրերը համապատասխան հիշատակարանային մեջբերումներով, բացատրություններով և այլն, սակայն վերջնական արդյունքում Հոդվածը չի տալիս այնպիսի հարցերի պատասխաններ, որոնք թերևս ավելի կհստակեցնեին արված աշխատանքը և կնպաստեին Արքաեղբոր գործունեության ճիշտ գնահատմանը: Այսպես, ընթերցողը չի իմանում Արքաեղբոր ընդօրինակած, ստացած, սրբագրած ձեռագրերի քանակն առանձին-առանձին: Թեև նշված է, որ կան և՛ թղթե, և՛ մագաղաթե ձեռագրեր, պարզ չէ դրանց հարաբերակցությունը, նույնպես և երկաթագիր ու բոլորագիր ձեռագրերի քանակը, չկան ձեռագրերի մեծության, կազմության, մանրանկարչության մասին տեղեկություններ և այլն: Կարծում ենք՝ միայն այս բոլոր փաստերի համադրմամբ կատարված աշխատանքով է հնարավոր իրապես գնահատել Հովհաննես Արքաեղբոր ավանդը:

Այսպիսով, կարելի է ասել, որ աղբյուրների թերի քննությունը և ոչ ճիշտ գնահատումը հանգեցրել են այնպիսի բացթողումների, որոնց հետևանքով Հոդվածի խնդիրը (ներկայացնել և գնահատել Արքեղբոր գրչահովանավորչական գործունեությունը) մասամբ է հաջողվել (միայն գնահատելու առումով): Մյուս կողմից էլ, որոշ դեպքերում փաստերի (հատկապես ձեռագրերի հետ կապված տվյալների) ոչ ճշգրիտ ներկայացման հետևանքով առաջացած թերությունները Հոդվածը դարձնում են պակաս հավաստի և արժեքավոր հետազոտում-նասիրությունների համար: Անշուշտ, աղբյուրագիտության, ձեռագրա-

գիտության և մի շարք այլ բնագավառների համար միջնադարյան յուրաքանչյուր անհատի գործունեության քննությունն ու ներկայացումը ինքնին կարևոր ու շնորհակալ գործ է հենց միայն գիտական հանրությանը նրա գոյության մասին տեղեկացնելու տեսակետից, սակայն աղբյուրների մանրակրկիտ վերլուծությունն ու եղած ուսումնասիրությունների ճիշտ գնահատումը երբեք չպետք է թերագնահատվեն:

Բանալի բառեր – *Կիլիկիա, Հովհաննես Արքաեղբայր, հայերեն ձեռագիր, ձեռագրացուցակ, հիշատակարան, գրչական գործունեություն, 13-րդ դար*

KNAR ARUTYUNYAN – По поводу статьи о деятельности Ованеса Царебрата по переписке манускриптов. – Известный киликийский религиозный деятель и просветитель XIII столетия архиепископ и писец Ованес, брат царя Этума I, известен под прозванием Царебрат (Аркаехбайр). Ему начиная с XIX в. посвящено немало исследований. Последняя работа о нём, «Деятельность Ованеса Царебрата по переписке манускриптов», принадлежит Асмик Бадалян и напечатано в «Вестнике Ереванского университета. Арменоведение» (2019, № 3 (30), с. 16-25). Автор исследует 25-ю рукопись Ованеса. Внимательный и подробный анализ, сравнение статьи с данными каталогов рукописей и колофонов свидетельствуют, что в статье допущено около 15 ошибок, которые не объяснены или не доказаны. Исправляем их, дабы избежать дальнейших заблуждений в этой области.

Ключевые слова: *Киликия, Ованес Аркаехбайр (Царебрат), армянская рукопись, каталог рукописей, колофон, 13 век*

KNAR HARUTYUNYAN – Review on the Article of Hovhannes Arqaexbayr’s Writing Activity. – One of the famous persons of the 13th century Cilicia is priest, archbishop, scribe Hovhannes Arqaexbayr, the brother of king Hetum I. There are some references to his activity in different fields since the 19th century. The latest work about his writing activity is the article “The Writing activity of Hovhannes the King’s Brother” by Hasmik Badalyan published in the “Bulletin of Yerevan University. Armenian Studies” (2019, № 3 (30), p. 16-25). We find out some essential mistakes and lapses in this article. Here the author examines 25 manuscripts of Hovhannes and gives a conclusion according to them. But attentive and detailed examination with comparing the article’s examples and facts with the ones in the catalogues of Armenian manuscripts and colophons shows about 15 inconsistencies and mistakes without any explanation and argument. So we show and correct them to prevent further mistakes of researchers in this area.

Key words: *Cilicia, Hovhannes Arqaexbayr (the Brother of King), Armenian manuscript, Catalogue of manuscripts, colophon, writing activity, the 13th century*